

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 02 ” 05 2012թ

№ 48 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ՔԻՄԻԱ», «ՖԻԶԻԿԱ», «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐԳՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ--728 հրամանագրի 1.6 կետի գ) և 1.16 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 15-ի N 106/Ք հրամանով սահմանված ուսումնական առարկաների ուսուցիչների և դասվարների միջև «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգի 1-ին կետի՝ որոշում եմ.

1. 2012 թվականի մայիսի 3-ից 10-ը ՀՀ Սյունիքի մարզում անցկացնել «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» առարկաների ուսուցիչների և դասվարների միջև «Լավագույն ուսուցիչ» մրցույթ:
2. Հաստատել մրցույթի արդյունքները գնահատող մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնաժողովին՝ մրցույթի մարզային փուլի նախապատրաստման, անցկացման աշխատանքները իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ»



Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2012թ. մայիսի 2
ք. Կապան


Հավելված

ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. մայիսի 2-ի
N_48_Ա որոշման

Կ Ա Ձ Մ

«Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» առարկաների ուսուցիչների և դասվարների միջև «Լավագույն ուսուցիչ» մրցույթի մարզային գնահատող հանձնաժողովի

- | | | |
|--------------|---------|---|
| 1.Գրիգորյան | Արսեն | աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ / նախագահ/ |
| 2.Ասատրյան | Նորա | աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ |
| 3.Ալավերդյան | Գայանե | Կապանի թիվ 9 ավագ դպրոցի ուսուցչուհի /համաձայնությամբ/ |
| 4.Ավրայան | Նունե | Կապանի թիվ 2 ավագ դպրոցի ուսուցչուհի /համաձայնությամբ/ |
| 5.Բալայան | Լուսինե | Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի աշխատակից /համաձայնությամբ/ |
| 6.Դարբինյան | Գալուստ | Կապանի «Մեսրոպ Մաշտոց» եկեղեցու հոգևոր հովիվ, վարդապետ /համաձայնությամբ/ |

Աշխատակազմի ղեկավար  Ղազարյան

